թեան գլխաւոր առաջադրութիւններն ու նշանարանները էին.

ա) Դեմոկրատական հաշտութեամբ վերջ տալ պատերազմին:

բ) Ո՛չ մէկ յարաբերութիւն բուրժուական կառավարութիւնների հետ:

գ) Ո՛չ մի գաղտնի դիւանագիտութիւն:

դ) Ո՛չ մի կոպէկ հին ռեժիմից մնացած արտաքին պարտքերը վճարելու համար:

ե) Ամէն ինչ համաշխարհային ընկերային յեղափոխութեան համար:

Հետեւենք այս առաջադրութիւններից իւրաքանչիւրի ճակատագրին քայլ առ քայլ՝ զանց առնելով մանրամասնութիւնները:

* * *

Պատերազմի եւ խաղաղութեան խնդրում բոլշեւիկները ղեկավարւում էին Փետրուարեան Յեղափոխութեան կարգախօսով, այսինքն պահանջում էին «հաշտութիւն առանց հողային բռնագրաւման, առանց պատերազմական տուգանքի եւ համաձայն ազգերի ինքնորոշման իրաւունքի»: Միակ տարբերութիւնն այն էր, որ նրանք պնդում էին, թէ այսպիսի մի հաշտութիւն միայն իրենք կարող են գլուխ բերել: Եւ, հազիւ իշխանութեան գլուխն անցած, նրանք բանակցութիւնների մէջ մտան թշնամիների հետ՝ վերոյիշեալ հիմունքներով հաշտութիւն կնքելու համար:

Սակայն, բաւական էր, որ Լուդենտորֆը մատը թափ տար մեր այս հերոսների վրայ, որպէսզի նրանք լեղապատառ դէն շպրտէին բոլոր կարգախօսները եւ ոչ միայն թոյլ տային, որ թշնամիները բռնագրաւեն Մինսկն ու Դվինսկը, Կարսն ու Արտահանը, այլ եւ նրանց մատուցանէին Ռուսաստանի ոսկու պահեստի մի խոշոր մասը, իբրեւ պատերազմական տուգանք:

Սրանից յետոյ էլ, երբ Դաշնակիցները, պարտութեան մատնելով Գերմանիային եւ իր զինակիցներին, սրբեցին այս Բրեստ-Լիտովսկեան ամօթանքը Ռուսաստանի ճակատից՝ բոլշեւիկները «պատուաւոր հաշտարարութեան» նոր ապացոյցներ տուին Ռիգայում՝ ուր նրանք համաձայնութիւն ստորագրեցին լեհական շլեխտայի (ազնուականութեան) գարշապարների տակ նետելու ուկրայնական եւ բելօռուսական նահանգներից մի քանիսը եւ Մոսկուայում՝ ուր նրանք հաշտութիւն կնքեցին Թիւրքիայի հետ՝ նրա եաթաղանին յանձնելով ոչ միայն ամբողջ Տաճկահայաստանը, այլ եւ ռուսահայկական Կարսը, Արտահանը եւ Սուրմալուն:

Այսպիսով՝ «առանց հողային բռնագրաւման եւ առանց պատերազմական տուգանքի հաշտութիւն» նշանարանը բոլշեւիկեան կիրառումով դարձաւ հաշտութիւն հողային զիջումներ անելու եւ պատերազմական տուգանք վճարելու գնով»:

Իսկ ուր մնաց ազգերի ինքնորոշման իրաւունքը: Այս մասին նրանք չհամարձակուեցին իսկ ձայն հանել հաշտութեան բանակցութիւնների ժամանակ. հանդիսաւոր սրտով նրանք թշնամու լծի տակ դրին զիջած հողամասերի վրայ գտնուող ժողովուրդներին — այս բաւական չէ, այլ եւ իրենք, յարմար պարագային, ոտնատակ տուին ինքնորոշուած ազգբէջանցիների, հայերի եւ վրացիների ազգային իրաւունքը՝ նրանց երկիրները բռնագրաւելով եւ Ռուսաստանին կցելով: Եւ եթէ, այնուամենայնիւ, Ռուսաստանի նախկին հպատակ ազգերից մի քանիսն ազատագրուեցին, եթէ Լեհաստանը, Ֆինլանդիան, Լատուիան, Էստոնիան և Լիտվանիան տիրացան իրենց ազգ. ինքնորոշման իրաւունքին՝ այդ էլ եղաւ ոչ թէ համաձայն բոլշեւիկների բարեացակամութեան, այլ հակառակ նրանց նուաճողական ձգտումների: Վերոյիշեալ երկիրները, առանց բացառութեան, զէնքի ուժով ռուս բոլշեւիկներին վտարելով են ձեռք բերել իրենց ազգային իրաւունքը:

Այս բոլորով հանդերձ չպէտք է կարծել, թէ բոլշեւիկները իսպառ հրաժարուել են մանր ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի ընկրզրունքից: Ո՛չ, նրանք դեռ շարունակում են ջատագով մնալ այդ իրաւունքի. պայմանով սակայն, որ սրա պահանջը ուրիշներին առաջադրուի, ե՛ւ առաջադրուի այն դէպքում, երբ դա համապատասխան է բոլշեւիկների շահերին: Այսպէս, օրինակ, երբ Արդէլ Կրիմը Մարոկկում կամ սուլթան Արտաշը Սիւրիայում ազգային ինքնորոշման պահանջ են ներկայացնում Ֆրանսային՝ բոլշեւիկները ճղա-